

ԲՈՒԴԱՊԵՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Այս ամառուան արձակուրդիս միջոցին Կիլիկիոյ Կաթողիկոսարանին կողմէ պաշտօն և պատեհութիւնը արուեստաւ ինձ մասնակցելու Կիրակնօրեայ Վարժարաններու Եւրոպական Առաջին Համաժողովին, որ զուամարուեստաւ Հունգարիոյ հինաւորաց մայրաքաղաքին՝ Բուդապէստի մէջ, օգոստ. 11էն 16, 1931:

Կրօն. Դաստիարակութեան և Քրիստոնէական Հաւատքի իրական արժէքներուն պայծառ դիտակցութիւնով ծրագրուած, անգլիական նախաձեռնող եղիով կազմակերպուած այս դաստիարակչական հաւաքոյթը՝ մաճառ ոստանին մէջ՝ կ'արժէ ծանօթացնել Սիոնի ընթերցողներուն:

Համաժողովին նպատակը կը բղխէր և իր նուիրագործումը կը ստանար նախաձեռնողներու այն բնականաբար համոզումէն, թէ Քրիստոնէութիւնը կենդանի, ազնուացուցիչ, ազգերն ու անհատները իրապէս քաղաքակրթելու անհունապէս ընդունակ դիմաւորել ոյժով օժտուած կրօն է: Արդ, մեր կրօնին այս թնոյրը ուսումնասիրելու և դայն մարդկութեան ճշմարիտ երջանկութեան, բարոյական, հոգեւոր և ընկերային զարգացման է՛ն ազդեցիկ գործօնը դարձնելու հրամայական պարտաւորութիւնն ունինք:

Քրիստ. կրթութեան հետապնդած շրջեղ գաղափարականն է մասնաւորապէս մանուկներն ու երիտասարդները կենսական հաղորդակցութեան բերել և պահել՝ Աստուծոյ և ընկերութեան հետ՝ Յիսուս Քրիստոսով յայտնուած ճշմարտութեանց համեմատ: Որպէս զի Աւետարանի սկզբունքները աշխարհի կեանքին մէջ մեռեալ տառ չմնան, այլ պայծառափայլին քրիստոսանման կենցաղի հաստատուն սովորոյթներուն և ամենօրեայ հասարակական գործերու և ազեքներու մէջ, անհրաժեշտ է որ մարդիկ՝ մատաղ սերունդին միտքերը յատկապէս՝ դրոշմունք, թրծունք սիրովը Աստուծոյ, և կանուխէն վարժուին առաջնորդուելու Աստուածաշունչ Մատենանի ոգիով և անոր փրկարար սկզբունքներով:

Կրօն. Դաստիարակութիւնը եկեղեցա-

կաններու և աստուածորանական շրջանակներու մենաշնորհը չէ՛: Աշխարհիկ և հասարակաց դաստիարակութեան անբաժան մասն է ան այսօր ու աշխարհի կրթական մեծագոյն խնդիրներէն մէկը: Մարդկային ցեղին բարոյական օգուտը կը պահանջէ զպրոցական ծրագրերէն զբիթէ դուրս ձգուած այս կրթութեան արժանավայել կարեւորութիւն ընծայել, Կիրակնօրեայ Վարժարաններու միջոցաւ զոնէ:

Հետեւաբար, Կիրակնօրեայ Վարժարանները արդի մանկավարժական մեթոդներով և դասադիրքերով, գիտակցաբար կրօնասէր ուսուցիչներով օժտուելու և կրօնի ուսուցումը միւս ուսմանց և գիտութեանց չափ խնամեալ կերպով աւանդելու միջոցները ուսումնասիրելու և այս ամենուն մասին ցարդ կատարուած աշխատանքը ու ձեռք բերուած արդիւնքները ծանօթացնելու նպատակը ունէր այս Համաժողովը:

Կը փութամ աւելցնել թէ Համաժողովին այսքան մասնադիտական կարծուած նպատակն ու առաջադրութիւնը՝ չնորհիւ եւրոպ. մանկավարժութեան նոր մեթոդներուն տեղեկ կատարակներէ ընտրուած դասախօսներու, կարելի եղաւ շօշափելի և որոշ պոտկերի մը վերածել:

Կրթական մեթոդի, հոգեբանութեան և ընկերային գիտութեանց հետ սերտիւ կապուած կնճառ հարցեր համաժողովի պատուիրակներուն մտքերուն մէջ կարծէք թանձրացեալ ձև առին:

Անոնցմէ մեծ մասը ո՛չ միայն մանկավարժական նորութիւններու տեղեկացանքներն առաջին տեղամ, այլ նոր լոյսով մը տեսան ու սկսան ըմբռնել ճարտարաբուեստի, քաղաքական, տնտեսական, ընկերային աշխարհի, և նիւթապաշտիկ ու հաճոյամոլ աշխարհայեցողի հովանաւորութեան ներքե թաքուն սպասող, և պատերազմի, բնական աղէտքներու և բացառիկ տագնապներու պահերուն՝ քրիստոնէական մշակոյթին սպասնացող չարիքներուն բուն արմատները:

Անուրանալի է որ ազնուազոյն մարդկութեան և նոր աշխարհի մը պէտք կայ: Անոնց վերստեղծումին ու կազմակերպումին յոյսը, խոստումն ու արդիւնաբար գործօնը՝ ժողովուրդի զաւակներուն քրիս-

տոնէական խնամեալ դաստիարակութեան մէջն է:

Առանց դաւանական կնճիւղներուն բաւիղին մէջ մտնելու, մանուկներուն և պատանիներուն մտքերուն, հոգիներուն մէջ ցանկ Աւետարանի սերմերը ու մեր կրօնի մարգարիտները անոնց առջև թափել: Նոր սերունդը նախապատրաստել ընթանիլին, եկեղեցիին, իր քաղաքին կամ գիւղին, պետութեան ու Ազգին մէջ օգտակար, ազդեցիկ և բարի ոյժերու և դորձերու սատարողի դերին:— Եւ այս է Գործնական Բրիտսոնեոլոգիան՝ որուն անվերջ և համաշխարհական ջատագովը ըլլալու կը ձգտի Կիրականօրեայ Վարժարանը ամէն ազգի մէջ՝ ըստ պայմաններուն:

Համաժողովին Կազմը. — Եւրոպական 27 տարրեր ազգերէ և 12 տեսակ եկեղեցիներէ 335 արձանագրեալ պատուիրակներ ներկայ եղան նիստերուն:

Հեռուոր Իսլանտայէն, Ֆինլանտիան Մարքէն, Բալդիկեան երկրներէ այր և կին ներկայացուցիչներ, մեծ մասամբ Կիրականօրեայ Վարժարաններու վարիչներ, ուսուցիչներ, և պետական վարժարաններու մէջ պաշտօնավարող դաստիարակներ, մանկավարժներ, քաղաքիչներ, կրօնաթերթերու խմբագիրներ, առևտուրի և արհեստի տէր անձեր, փաստաբաններ, եւ այլն, փութացած էին Համաժողովին գալու իրր պատուիրակ կամ դաստիարակ:

Յուշատետրէս քաղելով Սիոնի ընթերցողներուն կը ներկայացնեմ ցանկ մը, զոր ջանացի կազմել Համաժողովի զազարի պահերուն անձնական հարցումներով և պատուիրակներուն հետ տեսակցութիւնով: Յանկը թերի է, սակայն կրնայ զազափար մը տալ ընթերցողներուն՝ թէ՛ պատուիրակներուն թիւին և թէ՛ անոնց եկած երկիրներուն մէջ Կիրակ. Վարժարաններուն տրուած համեմատական ոյժին մասին:

	Պատուիրակ	Կիր. Վրժ.	Անակերս
Անգլիա	5	...	
Ալճերիա	1	...	
Աւստրիա	12	265	
Բոլանդա	6	266	22,340
Գերմանիա	3	8000	120,000
Եուկո Սլաւիա		150	9,000
Էսթոնիա	6	120	5,600
Իսլանդա	1	76	1,850
Իտալիա	2	200	7,000

Լաթվիա	3	265	12,827
Հունգարիա	30	700	
Հոլանդա	2	1500	250,000
Մարոք	1	...	
Նորվեգիա	4	2441	185,128
Շուէտ	10	9000	400,000
Չեխոսլաւաքիա		...	
Պելճիքա	2	63	2,300
Պուլկարիա	2	65	3,373
Ռումանիա		1556	50,757
Տանիմարրա		1740	111,831
Ֆինլանդիա		9578	204,190
Ֆրանսա	2	1500	50,000
Ամերիկա	1	...	

Ի դէպ է հոս յիշել թէ եւրոպական քրիստոնէութեան երկու ծայրայեղ ներհակ տարրերէն՝ պոլշեկիկ Ռուսիայի օրթոտոքս-ներէն և Հռոմէական կաթոլիկ ժողովուրդներէն՝ որ և է ներկայացուցիչ չկար:

Համաժողովին լեզուները. — Համաժողովի գործառնութեանց պաշտօնական լեզուներն էին՝ անգլերէն, գերմաներէն և մաճառերէն: Դասախօսութիւնները, ճառերն և ուղերձները խօսուեցան և մասամբ տպագրուած էին այս երեքով: Մեծամասնութիւնը անոնցմէ գոնէ մէկը կամ երկուքը կատարելապէս կը հասկնային:

Կ'արժէ պատուոյ յիշատակութիւնն ընել այստեղ այն ընտիր լեզուապիտական ծառայութեան, զոր Բուդապեստայի Վիկտորեան գերդաստանը Համաժողովին մատուցց: Հայր և որդի և դուստր Վիկտորեանք՝ նիստերու միջոցին պաշտօնական թարգմանի դերը կատարեցին յաջողութեամբ:

Համաժողովին նիստերը գումարուեցան Բուդապեստի կեդրոնը «Լից Ֆէրայն» երաժշտանոցին փառաւոր սրահներուն մէջ: Շէնքին թատրոնը՝ լսողական օրինաց համեմատ կառուցուած ըլլալով, բացումի և փակումի ու Հրապարակային նիստերը տնոր մէջ եղան:

Վեցօրեայ նստաշրջանը բաժնուած էր երեք մասերու: Առաջինը (ժամը 9-1), յիս միջօրի (ժամը 2-6) և երկրորդը (7-11): Դիտելի և զովելի էր պատուիրակներուն ճշտապահութիւնը, լուսթիւնը և լարուած ունկնդրութիւնը:

Հրապարակային նիստերը՝ ուր ոչ-պատուիրակ մեծ բազմութիւն մը ևս կ'աւելնար, մանաւանդ բացման և փակման

նիստերը, զեղարուեստական, երաժշտական և թատերական բարձր հաճոյք մատակարարեցին, 120 հոգինոց երկսեռ երգչախումբի մասնակցութեամբ:

Նախագահութիւնը վիճակեցաւ Կիր. Վրժ. Ընկերակցութեան Ընդհ. Գարտուղար Տք. Ծէյմս Բէլիին՝ որ անթերի ներաշարժութեամբ և ձեռնհասօրէն վարեց իր փափուկ պաշտօնը մինչև վերջ: Սկզբնական ծրագրին համաձայն պիտի նախագահէր Անդլիացի Սըր Հէրլըտ Մակինտոշ՝ Ընկերակցութեան նախագահը, որ սակայն հիւանդութեամբ արգելուած, փութացած էր հեռագրով մը ռզուենել համերգական այս Համաժողովը, իր ջիւղ խնդակցութիւնը, համակրանքն ու բարեմաղթութիւնները հաղորդելով աշխարհի մէջ 31 միլիոն ուսանողներու և մօտ 3 միլիոն ուսուցիչներու հոգեկան և մտաւոր հաղորդակցութեամբը մեծ յոյսեր ներշնչող քրիստոնէական շարժման կատարելագործումին օգնելու կոչուած Բուդապեստի Համաժողովին: Բուռն խանդավառութեամբ ընդունուած այս հեռագրին պատասխանեցաւ անմիջապէս, և կարգացուեցաւ Սըր Հէրլըտի տպագրեալ բացման ուղերձը, զոր ինք պիտի կարդար, եթէ ներկայ ըլլալ կարենար:

Համաժողովին առաքեալները անկարելի է յօդուածի մը սահմանին մէջ նոյն իսկ ամփոփել: Ինչ որ կարելի է տալ հոս, դասախօսութեանց նիւթերն ու խօսողներուն անուանացուցակը պիտի ըլլայ:

Առաւօտեան նիստերը յատկացուած էին մանկավարժական քանի մը նիւթերու: Ամէն նիւթի մասին պատրաստուած և երեք լեզուներով տպագրուած գրութիւններու ընթերցումին կը յաջորդէին դասախօսին ուղղուած հարցումներ, բացատրութիւններ, ու կարծիքի և փորձառութեանց փոխանակութիւն:

Հետոյս յաջորդաբար դասախօսեցին ի միջի այլոց՝ Պրոֆ. Ծան Վիկտոր, Բուդապեստի Համալսարանին փիլիսոփայութեան ուսուցչապետներէն. նիւթն էր «Ուսուցիչը և Յանձնառութիւնը»: Դասգոյէն (Անգլիա) Ծան Լ. Կենտ՝ (Պսակ. Արուեստից) ուսումնասիրութիւն մը կարգաց «Դասագիրքերու» մասին: Լոնտոնէն Էրնեստ Կ. Բրահամի դասախօսութեան նիւթն էր

«Ուսուցչին անձնագրութիւնը և պատգամը»: Ուրիշ փորձառու մանկավարժ մը, Դեկտ. Պալլի Ա. Երկայլ՝ Պերմիկհամէն, ուսումնասիրութիւն մը ներկայացուց «Թողներու» մասին: Օր. Էմիլի Հընտլի՝ դաստիարակուհի, հեղինակ և կին օրագրող՝ նիւթ ունէր «Կիրականօրեայ վարժարանները՝ մարզագալտ հոգեւոր գործիչներու»:

Դասախօսները՝ հմտալից ու շեշտակի՝ ներկայացուցին կրօն. դաստիարակութեան հետապնդած գաղափարականն ու ներկայ մանկավարժական տեսութիւններու համաձայն՝ իրենց նիւթերը:

Վիճարանութեանց ընթացքին երեան բերուեցան նաև երկու կէտեր. 1.— Կիր. Վարժարանները պէտք է նկատել Եկեղեցիի կեանքին ու գործին անհրաժեշտ յրացուցիչը. 2.— Անոնք ինքնին նպատակ մը չեն, այլ միջոցներ նոր սերունդը իր սեպհական Եկեղեցիին, Ազգին ու միջավայրին ու Հայրենիքին հաւաքադատ կեանքին հաւատարմ պահպանն ու մշակը դարձնելու համար:

Կէսօրէ վերջի նիստերը աւելի գործնական խնդիրներու և մեթոտներու բազմազանութիւն ու ցուցադրումին նուիրուած էին:

Պատուիրակները բաժնուեցան՝ իրենց նախընտրութեան համեմատ անդերէն, գերմաներէն և մաճառ լեզուներով դասախօսող ուսուցիչներու ղեկավարած ուսումնասիրական խումբերու: Նկատի առնուեցան Հոգեբանութեան տեսակետէն համեմատ մանուկներու, պատանիներու և երիտասարդներու կեանքի շրջաններու յարցումներ, որոշ և գլխաւոր հետազոտութիւններ, զարգացող ձգտումներն ու կազմուող տոմոսները, ինչպէս նաև այդ շրջաններուն ընթացքին կրօնի նպաստող և միասող իրողութիւնները: Յետոյ՝ ամէն մէկ շրջանի համեմատ կրօնի ուսման առարկաներուն, դասագիրքերու և մեթոդի փոփոխմանց պէտքը: Եւ յանձնարարելի դասուեցաւ միջավայրի ու ցեղի պահանջմանց ու պատմական ու ներկայ կեանքին հիման վրայ՝ կատարել փոփոխութիւնը՝ գիտական եղանակով:

Այս դասերուն և գործնական փորձերուն առաջնորդեցին Դիւստալ Լուստովսկի (Վիեննա), Մարտին Մարչինսկի (Պերլին), Օր.

Կ. Վիկտոր (Վ. Փիլ. Բուդապեստ), Տիկ. Նովոսնի (Պրագա), Օր. Ճէսի Կալտերվուդ (Գլազգո), Կ. Պուսկերկ (Շուէտ), Էմիլի Հընայի (Անգլիա), Դոկտ. Սոմեր (Ֆրանս-ֆուրաէն և հայախօս) ու Մր. Արթուր Բլէկ (Լոնդոնէն)։

Հրապարակային ժողովի նիստեր եւ նշանաբաններ. — Երեկոյեան նիստերը հանրային միջոցներու բնոյթն ունէին։ Վասն զի դուրսէն խօսողներ և ունկնդիրներ ալ ներկայ եղան։ Թատրոնը լեցուն կ'ըլլար սովորաբար։

Այս նիստերու մէջ ուղերձներ խօսեցան Ն. Բ. Կոմս Քլէպլայպերկ՝ յանուն հունգար կառավարութեան, որ ողջունելով Համաժողովը ըսաւ. «Ձեր գործը խաղաղութեան և ազգերու մէջ հաճութեան Բաղդադի Մայր Եկեղեցին կառուցանելն է»։

Բուդապեստի Բաղաքապետ Ֆ. Ռիւկայի կողմէն կարգացուած ուղերձէն յիշատակելի կը գտնեմ սա խօսքը. «Ազգի մը համար չկայ աւելի՛ կարեւոր խնդիր քան անոր մանուկներուն և պատանիներուն մտաւոր և ընկերային բարորութիւնը։ Սակայն անոնց չափ կարեւոր է զանոնք արժէքաւորող կրօնական դաստիարակութեան խնդիրը եւ։ Ձի բաւեր զանոնք կրթել ու խնամել. պէտք է կրօնի ոգին ու Աստուծոյ ձայնը դնել անոնց մէջ՝ ամբողջ կեանքի օրերուն համար»։

Պետտի Բարեկարգեալ եկեղեցիին եպիսկոպոսը, Դոկտ. Լատեսլանուս Ռափալ (Վ. Փիլ. և Վ. Ա.), յոյժ գեղեցիկ ճառ մը խօսեցաւ Եկեղեցիի ուսուցանող դերին վերայ և ըսաւ. «Անոնք որ Քրիստոսը ունին իրենց մէջ, անոնք միայն կրնան կրօնը սորվեցնել մանկանց»։

Լուտերական եկեղեցիի եպիսկոպոսը՝ Դեր. Պելա Քարի, ի մէջ այլոց, ըսաւ. «Մարդկային պատմութեան սերմը՝ մարդու հոգին է . . . հիւանալի է մշակոյթը ազգաց՝ որ երջանկութիւն կը բերէ։ Սակայն հոգիին մշակոյթը ազնուագոյն է . . . ինչպէս րաքիս մեզ կը բերէ թաքուն ներդաշնակութիւններ, կրօնական դաստիարակութիւնն ալ մեր հէք աշխարհին կը բերէ զմայլելի մեղեդիներ, զորս Աստուած զրաժ է մեզ համար։ Կիր. վարժարանները աշխարհի հոգիի մշակոյթին անդաստաններն են . . . »։

Մկրտչական եկեղեցիի հովիւը իր ճառին մէջ ըսաւ. «Բժիշկը հիւանդին բուրկեցաւ կը նայի, անոր սրտին ոյժը գիտնալու։ Կիր. վարժարանները Քրիստ. եկեղեցիին ոյժը ցոյց տուող բազկերակներն են»։

Մեթոդիստ եպիսկոպոսական երէցը հետեւեալ իրողութիւնը շեշտեց. «Վիճակագրութիւնները ցոյց կուտան թէ տղաք և մարդիկ ընդհանրապէս 20 տարիքէն առաջ կուգան Աստուծոյ։ Ահա մեր գործը, մեր պատասխանատուութիւնը . . . Աղնուագոյն գործ է մանուկները Աստուծոյ բերել . . . »։

Նախագահը իր ճառին մէջ շեշտեց. «Հունգարիոյ գեղեցիկ ոստանին մէջ օտարականի պէս չենք զգար. նպատակի նոյնութիւնը մեզ կ'եղբայրացնէ . . . ազգերու, դաւանութիւններու խտրոյցը կը քակտուի գէթ Համաժողովին մէջ . . . դուրսը զիրար չենք հասկնար, հոս եկած ենք Սրբոց Հաղորդութիւնը վերապրեցնելու . . . Ձմիզ բաժնող բաներու տեղ՝ մեզ իրարու միացնող բաներու հիման վրայ հոս ենք . . . Մանուկներու սիրտը համամարդկային եղբայրակցութեան ճամբան է . . . Աշխարհ կը տառապի Չարիքով. Մշակոյթը զոր ունինք՝ անզոր է իր Չարիքին յաղթելու։ Նոր սերմերու, Աւետարանի Սերմնացանին Մշակոյթին պէտք ունի աշխարհ»։

Երուսաղէմի Յովն Պատրիարքապետն ողջոյնը Համաժողովին բերած էր Գեր. Տիմոթէոս Արքեպս. Թեմալիս, որ օգոստ. 13 ի հրապարակային նիստին մէջ կարգաց անգլերէն ուղերձ մը խնդակցելով Համաժողովին այսքան յաջողութեամբ պատկուած ձեռնարկին։ Տեղեկութիւններ տուաւ կիր. վարժարաններու Պաղեստինի մէջ ըրած գործերուն ու վիճակին մասին։

Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսաբանին ողջոյնը Համաժողովին հաղորդեց անգլերէն ուղերձով մը՝ այս տողերը գրողը, Համաժողովին փակման առթիւ՝ օգոստ. 15 ին գիշերը։ Յայտնեց թէ Եւրոպա մեկնումի վերջին պահուն՝ Կիլիկիոյ Աթոռակից Տ. Բարգէն Վեհ. Կաթողիկոսին կողմէ իրեն յանձնուած պաշտօնով Համաժողովին ներկայ ըլլալը և խօսելու պատահականութիւնը՝ Եւրոպական Համաժողովին կողմէ Հայց. Եկեղեցւոյ ընծայուած պատիւ մը կը համա-

րի: Հակիրճ պատմական տեսութիւն մ'ըրաւ Հայոց դիւցազնական քրիստոնէութեան և դարերով մարտնչող եկեղեցիին և Ազգ. կրօնական կենդանի հաւատքին աղբիւրներուն (ընտանիքին, եկեղեցիին և զըզրոցներուն) դերին և համագործակցութեան մեթոդին վրայ. Թուրքիոյ այժմ անապատան Հայութեան և Հայաստանի հայոց կրօնական դաստիարակութեան վիճակին անդրադարձաւ: Կիրիլիոյ Տ. Սահակ Բ. Վեհ. Կաթողիկոսին՝ կիր. վարժարաններու մասին Կոնդակէն մէջբերումներ րբաւ, իբր Հայոց եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականութեան համակրութեան փաստը: (Կոնդակէն տաան օրինակներ ժողովէն վերջ փափաքողներուն ցրուեցան): Պատկերացուց ներկայիս Սիւրիոյ հայոց մէջ հիմնուած Կիր. վարժարաններու յառաջդիմութիւնը՝ չնորհիւ անոնց Ընդհ. Քարտուղար Պրն. Լեոն Զէնեանի անդուլ ջանքերուն, Առաջնորդներու գործակցութեան և Կաթողիկոսարանի պաշտօնական հովանաւորութեան: Ապա իր խօսքը փակեց շեշտելով՝ թէ բոլոր եկեղեցիները պէտք է օրինակ առնեն պաշխիմի գաստիարակութեան վարիչ սկզբունքներէն. և նոյնքան հաւանդ, սխիւթեմ և համոզում գնեն իրենց կրօնական դաստիարակութեան գործին մէջ նոր սերունդը Աստուծոյ բերելու համար, ո՛րքան պաշխիմիներ զրաժ են՝ մանուկները կրօնէն, եկեղեցիէն և Աստուծմէ ուժացնելու և երիտասարդները քրիստոնէութենէ տարհամոզելու համար:

Ամենավերջին ատենախօսքը եղաւ Դոկտ. Դոնալդ Ֆրէյզըր (Սկոտլան), որ Համաժողովի գործը ներկայացուց գեղեցիկ և միտնգամայն զուարթ ոճով մը: Դոկտ. Ֆրէյզըր պերճախօս բեմբասաց մըն է. Կեզը. Ափրիկէի մէջ աշխատած է 30 տարիներ: Տեսայ հրաւիրագիրը՝ որով նոյ.ի մէջ կոչուած էր քարոզելու Անգլիոյ թաղաւորին և արքայական գերդաստանին մատուոն մէջ:

Դրուագներ.— Համաժողովի պատգամաւորները մեծահանգէս և չքեղ թափօրով մը քալեցին Մայրաքաղաքին լայն պողոտաներէն՝ ծաղկեպսակ մը դնելու համար Հունդարիոյ Անձանօթ գինուորին գեղեցմանին վրայ:

Բուզապետի քաղաքապետը պատուիրակներուն թէյասեղան մը տուաւ, ուր

ճառեր խօսուեցան պետական պաշտօնեաներէ և մաճառ հին և նոր ժողովրդային երգեր լսեցինք:

Օգոստ. 15ին կէսօրէ վերջ ժամը 1-7 յատկապէս վարձուած շոգենաւով 335 պատգամաւորներ նաւադնացութիւն մը վայելեցին Դանուբի վրայ՝ մինչև Վիշիկրատ, ուր հոռմէական շրջանէ բանախ մը, Կորդինոս իշխանին հռչակաւոր զրադարանին և այլ շէնքերու մնացորդներ տեսանք:

Համաժողովի փակման առիթով տեղի ունեցաւ Բարեկարգեալ եկեղեցիին մէջ Հաղորդութեան Խորհուրդը և սրտառու յայդ պաշտամունքին միջոցին հաղորդուեցան հաղարաւորներ՝ ահիւ և երկիւղածութեամբ: Եւ ոչ առանց յուզման հանդիսատես եղայ եւրոպացի 27 ազգերէ հոն հաւաքուած, երիտասարդութեան մէջ զործող մարդոց և կիներու ընտիր բազմութեան, որ Ս. Սեղանին մօտեցան ջերմ եռանդով, նորոգելու համար անգամ մըն ալ Տէր Յիսուսի Աւետարանին և նոր սերունդին ծառայելու իրենց նուիրական ուխտը:

Տարակոյս չունիմ թէ պատգամաւորներ օրհնուած դարձան իրենց երկիրները, խոր ցնծութիւն և նոր ներշնչումներ տանելով՝ Ս. Աւետարանի նուիրական Օրէնքը և Փրկչին Զայնն ու Պատկերը նոր սերունդին հոգւոյն մէջ զրոյմելու գործին:

ՇԱՀԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՍՊԱՐԵԱՆ

ԱՄԱՎԵՐՋԻ ԴՈՒՆՈՒԹԻՒՆ

Դո՛ւն, Տէր, Դո՛ւն այս արին
իւ լրման հասցուցի:
Շնորհակալ եմ եզմէ
իմ Աստուծ եւ իմ Տէ՛ր:
Էակներն այլազան
Քեզմով միայն կը պահուին:
Պատկն ալ եւ՛ցրք արուան
Քեզմով միայն կ'օրհնուի:
Զբո՛ր որ Քեզ հանչնան
Էակներն համբո՛ւն:
Մինչդեռ այդ հանաչման
փոխարէն Դո՛ւն ինձմէ
միայն սէր կը խնդրես:
Ինչ չբժնաղ եւ վրսեմ
եւ արի աւեւսուր:
Կ'օրհնեմ, Տէր, եւ ըզՔեզ
այժմ եւ մինչեւ իսպառ: